






Հեղինակ
ԷՄՐՍԸՆ

Թարգմանիչ
ԵՏԱՆ

ՏԻՊԱՐ ՄԱՐԴԻԿ



Ա.

ՆԱԲՈԼԷՈՆ


ԿԱՄ

ՈՎ Է ԱՇԽԱՐՀԻ ՄԱՐԴԸ



Կ. ՊՈԼԻՍ

1913



A
13890

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ
Օ. ԱՐՋՈՒՄԱՆ
№ 200

ՏԻՊԱՐ ՄԱՐԴԻԿ



ՆԱԲՈԼԷՈՆ, ԿԱՄ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՐԴԵ

ԺԹ. դարու ականաւոր անձերուն մէջ, Նարոյէոն ամէնէն աւելի ծանօթն է, և ամէնէն աւելի հզօրը, և իր գերակշռութիւնը կը պարտի այն հաւատարմութեան որով կ'արտայայտէ գործունեայ և մշակուած մարդոց զանգուածային մասերուն խորհուրդին և հաւատքին շեշտը, ձգտումները: Սուէտէնպօրկի դրութիւնը ա՛յն է որ մէն մի գործարան համասեռ մասնիկներէ շինուած է. կամ, ինչպէս երբեմն բացատրուած է, իւրաքանչիւր ամբողջութիւն նմանակներէ շինուած է. այսինքն՝ թոքերը յանձունս փոքր թոքերէ կը բաղկանան. լեարդը՝ յանձունս փոքր լեարդերէ, երիկամունքը՝ փոքր երիկամունքներէ, ևն. և Այս հանգիստութեան համաձայն, եթէ տեսնուի որ մարդ մը իրեն հետ կը տանի ընդարձակ թիւերու ոյժն ու սէրերը, եթէ Նարոյէոն Յրանստ է, եթէ Նարոյէոն Եւրոպա է, պատճառը ա՛յն է որ փոքր Նարոյէոններ են ա՛յն ժողովուրդը որուն վրայ կը տիրապետէ:

Մեր ընկերութեան մէջ, մնայուն հակառակութիւն մը կայ պահպանողական և ժողովրդային դասակարգերու միջեւ, իրենց բախտը շինողներուն և դեռ բախտ չչինած երիտասարդներուն միջեւ, մնում աշխատութեան շահերուն — այսինքն արդէն երկար

ժամանակէ ի վեր գերեզման իջնող ձեռքերուն, որոնց աշխատութիւնը հիմա դրամական միջերթի, կամ ծոյլ դրամատէրներու ստացուածքը եղող հողերու և շէնքերու մէջ թաղուած է — և ապրող աշխատութեան շահերուն միջեւ, որ կ'աշխատի ինքն ալ տէր ըլլալ հողի, և շէնքերու և դրամական միջերթի: Առաջին դասակարգը երկչոտ է, անձնասէր, անազատական, նորութիւնը ատող, և շարունակ թիւ կը կորսնցնէ մահուամբ: Երկրորդ դասակարգն ալ անձնասէր է, ասպատակող, յանդուգն, յանձնապաստան, միշտ թիւով կը գերազանցէ միւսին վրայ, և իր թիւերը կը ստուարացնէ ամէն ժամ ծնունդներով: Կը փափաքի ամէն արահետ բաց պահել ամէնուն մրցումին, և արահետները բազմապատկել. — գործի մարդոց դասակարգը Ամերիկայի մէջ, Ֆրանսայի մէջ, Անգլիոյ մէջ, և Եւրոպայի ամէն կողմերը, ճարտարարուեստի և հնարամտութեան դասակարգը: Նարոյէտն անոր ներկայացուցիչն է: Ժիր, արի, կարող մարդոց բնազդումը, ամէնուրեք միջին դասակարգին մէջ, Նարոյէտնը մտանանիշ բրած է իրրեւ մարմնացեալ ժողովրդայինը (Տէմօքրատ): Անոնց առաքինութիւններն ու անոնց մոլութիւնները ունեցաւ, ամէն բունէ ի վեր, անոնց ոգին կամ ձգտումը ունեցաւ: Այդ ձգտումը նիւթական է, որ կը յառի զգայական յաջողութեան մը, և այդ վախճանին կը գործածէ ամէնէն ճօխ, ամէնէն զանազանակ միջոցները, մեքենական ուժերու հետ ընտանի, բարձրորէն մտացի, լայնօրէն և ճշգորէն բազմահմուտ ու հնարաւոր, բայց բոլոր մտաւոր և հոգեկան զօրութիւնները նիւթական յաջողութեան մը միջոցներուն ստորադասող: Նպատակըն է հարուստ մարդ ըլլալ: «Աստուած մէն մի ժողովուրդի մարգարէ մը շնորհած է իր սեփական լեզուով»,

կ'ըսէ Գուրանը: Բարիզ և Լոնտոն և Նիւ Սօրք, վաճառականութեան, դրամի, և նիւթական կարողութեան ոգին, պիտի ունենային իրենց մարգարէն. և Պոնաբարդ որակուեցաւ և զրկուեցաւ:

Նաբոլէոնի անէքսթեթիկներուն, կամ յիշատակներուն, կամ կեանքերուն միլիոնաւոր ընթերցողներէն իւրաքանչիւրը կը հրճուի էջէն, որովհետեւ անոր մէջ կ'ուսումնասիրէ իր ինքնայատուկ պատմութիւնը: Նաբոլէոն կատարելապէս արգի է, և, իր բախտին ամենաբարձր կէտին վրայ, լրագիրներուն բուն իսկ ոգին ունի: Սուրբ չէ — իր իսկ բառը գործածելով «Գարուշինեան» չէ և հերոս չէ, բարձր իմաստով: Փողոցի հասարակ մարդը անոր մէջ կը գտնէ վաղոցի ուրիշ հասարակ մարդոց յատկութիւններն ու կարողութիւնները: Կը գտնէ զայն, ճիշդ իրեն պէս, ծնունդով քաղաքացի մը, որ, շատ իսկ զիւրբմունկի արժանիքով, հասաւ ա՛յնպիսի աւրական դիրքի մը, որ կրցաւ թոյլ տալ իրեն բոլոր ա՛յն ճաշակները զորս ունի հասարակ մարդը, բայց պարտաւորուած է քողարկել և ուրանալ զանոնք. լաւ ընկերութիւն, լաւ զիրքեր, յաճախակի ուղեւորութիւն, հագուստ, հացկերոյթ, անհամար ծառաներ, անձնական կշիռք, իր գաղափարներուն գործադրութիւնը, իր շուրջը բոլոր գտնուողներուն հանդէպ բարեբարի մը յարատեւ զիրքը, նկարներու, արձաններու, երաժշտութեան, պոլիատներու և պայմադրական պատիւներու նըրբացած վայելքները — ճշդիւ ինչ որ հաճելի է ԹԹ. դարու մէջ իւրաքանչիւր մարդու սիրտին, — ունէր այս հզօր մարդը:

Ճշմարիտ է որ իր շուրջը գտնուող ամբոխին մըտքին յարմարելու Նաբոլէոնի կարողութիւնը ունեցող մարդ մը ո՛չ միայն միւս միտքերուն ներկայացուցիչը

կ'ըլլայ, այլ իսկապէս մենալաճառորդ մը և իւրացուցիչ մը: Այսպէս Միռապօ բանագողեց Ֆրանսայի մէջ խօսուած մէն մի լաւ խորհուրդ, մէն մի լաւ բառ: Տիւմօն կը պատմէ թէ Դաշնադիրներուն սրահին ունկընդիրներու յատուկ բեմին վրայ նստած մտիկ կ'ընէր Միռապոյի ճառ խօսելուն: Յանկարծ Տիւմօնի խելքին փչեց այդ ճառը նմանցնել վերջարան մը յարմարցնելով, զոր անմիջապէս զրեց մատիտով և ցոյց տուաւ Լորտ Էլճինի որ քովը նստած էր: Լորտ Էլճին հաւնեցաւ, և երեկոյին Տիւմօն ցոյց տուաւ զայն Միռապօյի: Միռապօ կարդաց զայն, հրաշալի գտաւ, և յայտարարեց թէ վաղը ժողովին առջեւ իր ընելիք բանախօսութեան կ'ուզէ կցել զայն: «Անկարելի է, ըսաւ Տիւմօն, որովհետեւ դժբախտաբար Լորտ Էլճինի ցոյց տուած եմ»: «Եթէ Լորտ Էլճինի ցոյց տուած էք, և անկից զատ յիսուն հոգիի ալ, դարձեալ պիտի խօսիմ զայն վաղը», և խօսեցաւ երկրորդ օրը ժողովին նիստին, և մեծ ազդեցութիւն գործեց: Որովհետեւ Միռապօ, իր գերահօր անձնաւորութեամբ, զգաց թէ այն բաները, զորս իր ներկայութիւնը ներշնչած էր, իր կողմէ ըսուածի պէս պիտի ըլլային և թէ զանոնք որդեգրելով անոնց կարեւորութիւնը կ'աւելնայ: Շատ աւելի բացարձակ և կեղբոնացուցիչ էր Ֆրանսայի մէջ Միռապոյի ժողովրդականութեան և անոր գերակշռութենէն շատ աւելի բանի մը յաջորդը: Արդարեւ նաբուլէոնի դրոշմը կրող մարդ մը կը դադրի գրեթէ զուտ անհատական խօսք և կարծիք ունենալէ: Այնքան լայնօրէն հաղորդական է, և այնքան ընկալուչ որ գիւան մը կը դառնայ իր դարուն և իր երկրին բովանդակ տեղեկատուութեան, մտացիութեան և կարողութեան: Կը շահի ճակատամարտը, օրինագիրքը կը շինէ. կշիռքներու և

չափերու գրութիւնը կը հաստատէ, հարթ հաւասար կ'ընէ Այպեանները, ճամբաները կը շինէ: Բոլոր նշանաւոր ճարտարագէտները, գիտունները, վիճակագիրները, կը տեղեկագրեն իրեն. նոյնը կ'ընեն ամէն սեռի մէջ բոլոր լաւ գլուխները, կ'որդեգրէ լաւագոյն կարգերը, իր գրոջմը կը հաստատէ անոնց վրայ, և ո՛չ միայն ասոնց, այլ մէն մի բարեղէպ և յիշատակելի բացատրութեան վրայ: Նաբոլէոնի խօսած մէն մի վճիռը, և իր գրուածքին մէն մի տողը կ'արժէ որ կարդացուի, իբրև թէ Ֆրանսայի իմաստը ըլլայ այն:

Պոնաբարդ հասարակ մարդոց կուռքն էր, որովհետև գերագոյն աստիճանով ունէր հասարակ մարդոց յատկութիւններն ու կարողութիւնները: Քաղաքակաշնութեան ամէնէն վար մակարդակին վրայ իջնելուն մէջ տեսակ մը գոհունակութիւն կայ, որովհետև կը պրծինք այսպէս այլախօսութենէ և կեղծաւորութենէ: Պոնաբարդ, իր ներկայացուցած այս մեծ դասակարգին հետ հաւասար, աշխատեցաւ կարողութեան և բարգաւաճումի համար, — բայց Պոնաբարդ, մասնաւորապէս, ասոնց ո և է խղճահարութեան իր միջոցներուն մասին: Մէկ կողմ դրաւ բոլոր ա՛յն զգացումները որոնք շփութութիւն կը պատճառեն այդ նպատակները հետապնդող մարդուն: Զգացումները կիներուն և աղայոց համար էին: Փօնթան, 1804ին, արտայայտեց նոյն ինքն նաբոլէոնի ոգին, երբ Մերակոյտին կողմէ խօսք ուղղեց անոր. «Տէ՛ր արքայ, կատարելութեան բաղձանքը ամէնէն յոռի ախան է որմէ երբեք ազարտուած ըլլայ մարդկային միտքը»: Ազատութեան և յառաջդիմութեան ջատագովները «գաղափարամոլ»ներ են. — արհամարհանքի բառ մը յաճախ անոր բերնին մէջ. — «Նէքէր գաղափարամոլ մըն է». «Լաֆայէթ գաղափարամոլ մըն է»:

Իտալական հանրաժանօթ առակ մը կը յայտարարէ թէ, «եթէ կ'ուզես յաջողիլ, շատ բարի ըլլալու չես»: Ինչ ինչ սահմաններու մէջ առաւելութիւն մըն է հրաժարած ըլլալ բարեպաշտութեան, երախտագիտութեան և վեհանձնութեան զգացումներուն տիրապետութենէն. քանի որ ինչ որ անանցանելի արգելք մըն էր մեզի համար, և տակաւին է ուրիշներուն համար, պատշաճ զբա՜ր կ'ըլլայ մեր առաջադրութեանց համար. ճիշդ ինչպէս որ ձեռքը ամէնէն ողորկ ճամբուն կը փոխարկէ վտակը՝ որ ահելի թուժը մըն էր:

Նարոյէտն միանգամ ընդմիշտ հրաժարեցաւ զգացումներէ և սէրերէ, և ուզեց ինքիւրեն օգնել իր ձեռքերովը, և գլուխովը: Իրեն հետ ո՛չ հրաշք կայ, ո՛չ մոգութիւն: Գործաւոր մըն է պղինձի, երկաթի, փայտի, հողի, ճամբաներու, շէնքերու, դրամի, և զօրքերու, և խիստ յամառ և խոհական գործաւորապետ մը: Երբեք տկար և գրական չէ, այլ բնական ազգակներու ամբողջամբն ու ճշգրութեամբը կը գործէ: Չէ կօրսընցուցած իրերու հանդէպ իր բնածին հասկացողութիւնը և համակրութիւնը: Մարդիկ տեղի կուտան այսպիսի մարդու մը առջեւ, ինչպէս բնական գէպքերու առջեւ: Ապահովարար բաւական մարդիկ կան՝ որոնք մխրճուած են իրերու մէջ, ինչպէս երկրագործ, գարրին, նաւաստի և գործաւորները ընդհանրապէս. և զիտենք թէ այսպիսի մարդիկ ո՛րքան իրական և ամուր կ'երեւին զիտուններու և քերականադէտներուն մօտ. բայց այս մարդիկը սովորաբար թերի են յարգարանքի կարողութեան մասին, և անգլուխ ձեռքերու պէս են: Բայց Պօնաբարդ այս հանքային և կենդանական ուժին վրայ ինքնահայեցութիւն և ընդհանրացում աւելցուց վերին չափով, ա՛յնպէս որ մարդիկ անոր մէջ բաղադրուած

տեսան բնական և մտաւորական կարողութիւնը, որպէս թէ ծովն ու ցամաքը մարմին առած և սկսած ըլլային ձեռնագրել: Հետեւաբար ցամաքն ու ծովը կարծես կը նախենթադրեն զինքը: Գնաց իր սեզական տարրերուն և անոնք ընդունեցին զինքը: Գրող այս մեքենան գիտէ թէ ինչով կը գործէ, և ինչ կ'արտադրէ: Ճանչցաւ ոսկիին և երկաթին, անիւներուն և նաւերուն, զօրքերուն և դիւանագէտներուն յատկութիւնները, և պահանջեց որ ամէն ոք ըստ իր տեսակին պէտք է ընէ:

Պատերազմի արուեստը ա՛յն խաղն էր որուն վրայ կիրարկեց իր թուագիտութիւնը: Այդ արուեստը կը կայանար, իր կարծիքին համաձայն, միշտ թշնամիէն աւելի ուժեր ունենալուն մէջ, ա՛յն կէտին վրայ ուր պէտք է յարձակիլ թշնամիին դէմ, կամ ա՛յն կէտին վրայ ուր ան պիտի գործէ յարձակումը, և իր ամբողջ տաղանդը լարուած է անվերջ ուղղամտործով և զինուորական շարժումներով, քալելու համար միշտ թրշնամիին վրայ անկիւնի մը մէջ և փճացնելու համար անոր ուժերը մաս առ մաս: Յայտնի է թէ շատ փոքրաթիւ ոյժ մը, ճարտար և արագօրէն ուղղամտարելով, շատ աւելի թուով մարդոց գունդի մը պիտի յաղթահարէ. կարծես ընդհարումի կէտին վրայ մէկի դէմ երկու հոգի բերուէին միշտ:

Ժամանակները, իր կողմը և իր նախկին պարագաները միացան զարգացնելու համար այս տիպար Տէմոքրատը: Ունի իր դասակարգին լաութիւնները, և պայմանները անոնց գործունէութեան համար: Գործնական ոգին՝ որ ու է նպատակ ա՛յնչափ միայն կը յարգէ որքան միջոցը կը գտնէ արդիւնաւորելու դայն, միջոցներու գործածութեան, միջոցներու ընտրութեան,

պարզացումի և բաղադրութեան մէջ իր զգացած հրրճուանքը, իր գործին ուղղութիւնը և անթերիութիւնը, խոհեմութիւնը որով ամէն բան կը նախատեսուէր, և կորովը որով ամէն ինչ ի գլուխ կ'ելլէր, ըրին զինքը բնական գործարանը և զլուխը այն բանին զոր կրնամ գրէթէ կոչել արդի կազմը, կուսակցութիւնը, շարքը:

Բնութիւնը ամէն յաջողութեան մէջ ամենամեծ բաժինը կ'ունենայ ի հարկէ, և այսպէս ալ անոր յաջողութեան մէջ: Այսպիսի մարդու մը պակասը կար, և այսպիսի մարդ մը ծնաւ, քարէ և երկաթէ մարդ մը, կարող տասնըվեց կամ տասնըեօթը ժամ ձի նըստելու, քանի մը օր իրարու վրայ առանց հանգիստի կամ ուտեստի երթալու, մերթ հազիւ ռաքի վրայ պատառ մը բան ծամելով, և գործի պահուն վազրի մը արագութեամբ և ոստումով, մարդ մը ու է խղճահարութենէ անշփոթ, միակտուր, ընթացիկ, անձնասէր, խոհեմ, և ըմբռնումով մը՝ որ չէր հանդուրժեր ուրիշներուն ու է պատրուակներէն, կամ ու է նախապաշարումէ, կամ իր անձնական ու է կրակէն կամ տաղնապէն դեղեւելու կամ մոլորելու: «Իմ երկաթէ ձեռքս, կ'ըսէր, թեւիս ծայրը չէ. անմիջապէս գլխուս հետ կապուած է»: Կը յարգէր բնութեան և բախտին կարողութիւնը, և անոր կը վերադրէր իր առաւելութիւնը, փոխանակ ստորին մարդոց պէս իր արժէքը չափելու իր յամառութեան վրայ, և բնութեան դէմ մարանչելու: Իր սիրական պերճախօսութիւնը իր աստղին ակնարկելուն մէջ կը կայանայ, և կ'ախորժէր ինք, ինչպէս նաև ժողովուրդը, երբ ինքզինքը կ'անուանէր «Ճակատագրին զաւակը»: «Զիս կ'ամբաստանեն, կ'ըսէր, իրրև մեծ ոճրագործ, իմ դրոշմս ունեցող մարդիկ ոճիր չեն գործեր: Ելինչ աւելի պարզ եղած է քան իմ բարձ-

բացումս, ի զուր է վերագրել զայն դաւի կամ ոճիրի .
անոր պատճառն է ժամանակին մասնաւոր յատկու-
թիւնը, և հայրենիքիս թշնամիներուն դէմ լաւ կըռ-
ուած ըլլալուս համբաւը: Միշտ քալեցի ժողովրդային
մեծ զանգուածին կարծիքին հետ, և պատահարներուն
հետ: Ինչ օգուտ պիտի ունենային ինծի ոճիրները»:
Դարձեալ կ'ըսէր, իր զաւկին վրայ խօսելով. «Զաւակս
չի կրնար իմ տեղս անցնիլ: Ես ալ պիտի չկրնամ իմ
տեղս անցնիլ: Ես պարագաներուն տեղծուածն եմ»:

Ունեցաւ գործի ա'յնպիսի շեշտակի գնացք մը որ
երբեք իրմէ առաջ միացած չէր նո'յնքան ըմբռնողու-
թեան: Բոլոր շատախօսներուն սարսափ ազդող իրա-
պաշտ մըն է, և շուարեցուց ճշմարտութիւնը միմնցնող-
ները: Կը տեսնէ թէ ո'ւր կը կառչի նիւթը, կը նեա-
ուի դիմադրութեան ճիշդ կէտին վրայ, և ի դերեւ կը
հանէ ուրիշ ամէն նկատումներ: Հօր է շեշտակի վայր-
կեանին, ուղիղ կերպին մէջ, այսինքն՝ ինքնահայեցու-
թեան, դէմյանդիմանութեան մէջ: Երբեք սխալ հաշիւ
չըրաւ դէպի յաղթութիւն, այլ իր ճակատամարտները
չահեցաւ իր գլխուն մէջ, դաշտին վրայ դանոնք չահե-
լէ առաջ: Իր գլխաւոր միջոցները իրեն մէջ են: Ուրի-
շին խորհուրդ չի հարցներ: 1796ին կը գրէ Վարչու-
թեան. «Արշաւանքը վարեցի առանց մէկուն խորհուրդ
հարցնելու: Երբեք օգտակար բան մը պիտի չընէի, եթէ
ուրիշի մը գաղափարներուն համակերպելու հարկին տակ
ըլլայի: Ինչ ինչ առաւելութիւններ չահեցայ գերազանց
ուժերու վրայ, և թէեւ ամէն բանէ բոլորովին զուրկ,
սակայն համոզուած ըլլալով թէ ձեր վստահութիւնը իմ
վրաս կը հանգչէր, գործողութիւններս մտածումներուս
չափ արագ եղան»:

Պատմութիւնը լեցուն է մինչեւ այսօր թագաւոր-

ներու և կառավարիչներու ապիկարութեամբ: Անոնք արգահատելիներու դասակարգ մըն են, որովհետեւ չեն գիտեր թէ ի՞նչ պէտք է ընեն: Մանողները թեկ կը գատեն հացի համար. և թագաւորն ու իր նախարարները, ի՞նչ ընելիքնին չգիտնալով, սուիններով անոնց դէմ կ'ելլեն: Բայց Նարոլէոն հասկցաւ իր գործը: Մարդ մըն էր որ ամէն վայրկեան և ամէն պատահականութեան ատեն գիտէր թէ ետքը ի՞նչ պիտի ընէ: Ասիկա անհուն մխիթարութիւն և կազդուրում մըն է ո՛չ միայն թագաւորներուն, այլ քաղաքացիներուն ալ միտքին: Ինչ մարդիկ գիտեն վերջէն ընելիքնին. անոնք օրը օրին կ'ապրին, առանց յատակազծի, և յաւէտ իրենց գծին ծայրն են, և մէն մի գործողութենէ վերջ, դուրսէն մղումի մը կը սպասեն: Նարոլէոն աշխարհի առաջին մարդը եղած կ'ըլլար, եթէ իր նպատակները լոկ հանրային ըլլային: Ինչպէս որ է սակայն, վստահութիւն և կորով կը ներշնչէ իր գործողութեան արտաստուոր միատարրութեամբը: Անյողողող է, աներկբայ, ինքնամոռաց, ինքնամերժ, ամէն ինչ զոհելով իր ձգտումին, — դրամ, զօրք, զօրավար, և իր ապահովութիւնն ալ, իր ձգտումին, հասարակ արկածախնդիրներու նման իր անձնական միջոցներուն պերճանքէն չմոլորո՞ժ: «Միջադէպերը պէտք չէ կառավարեն քաղաքականութիւնը», կ'ըսէր, «այլ քաղաքականութիւնը՝ միջադէպերը»: «Ամէն դէպքէ քշուիլը՝ բնաւ քաղաքական դրութիւն չունենալ է»: Իր յաղթութիւնները նոյնքան դուռներ էին միայն, և վայրկեան մը իսկ աչքէ չվրիպեցուց իր դէպ առաջ ճամբան, ներկայ պարագային շլճորանքին ու ժխտրին մէջ: Գիտէր ընելիքը, և կը թռչէր իր նշանին: Կ'ուզէր համառօտել ուղիղ գիծը՝ երթալու համար իր առարկային: Ահուկի անէքսոթներ անտարակոյս կրնան

հաւաքուիլ իր պատմութենէն, իր յաջողութիւններուն գնուած արժէքէն, բայց պէտք չէ իրրեւ անգութ նկատուի, այլ միայն իրրեւ մէկը որ արգելք չէր ճանչնար իր կամքին առջեւ, ո՛չ արիւնսխանձ, ոչ անգութ, — այլ վա՛յ իր ճամբուն վրայ կեցած բանին կամ անձին: Ո՛չ արիւնսխանձ, այլ արիւն չխնայող, և անողոք: Նպատակը միայն կը տեսնէր. խոչընդոտը պէտք է տեղի տայ: «Տէ՛ր արքայ, զօրավար Գլառք չի կրնար միանայ զօրավար Ժիւնոյի հետ, աւսարիական հրետանիին ահուկի կրակին պատճառաւ»: — «Թո՛ղ գրուէ հրետանին»: — «Տէ՛ր արքայ, ծանր հրետանիին մօտեցող մէն մի զօրագունդ կը զոհուի: Տէ՛ր արքայ, ի՛նչ հրաման կուտաք»: — «Առա՛ջ, առա՛ջ»: Սէսիւզիէ, թնդանօթածիգնեբու գնդապետ մը, իր զինուորական Յիշուսակներուն մէջ, հետեւեալ կերպով տեսարան մը կը նկարագրէ Աւստէրլիցի ճակատամարտէն վերջ. «Այն պահուն երբ Ռուս բանակը կը նահանջէր դժուարութեամբ, այլ բարեկարգութեամբ, լծին սառոյցին վրայ, Նաբոյէոն կայսրը քառասմբակ արշաւեց դէպի հրետանին. «Ժամանակ կը կորսնցնէք», պոռաց. «կրակ բրէք սա՛ գանգուածին վրայ, պէտք է խղզուին. կրակ բրէք սառին վրայ»: Հրամանը անգործադրելի մնաց տասը վայրկեան: Ի զուր քանի մը սպաներ և ես բլուրի մը զառիթափին վրայ տեղ յունեցինք արդիւնքը առաջ բերելու համար. անոնց և իմ ուսմբերը սառին վրայ կը թաւալէին, առանց զոյն կոտրելու: Աս տեսնելով, թեթեւ խորաընկէցները բարձրացնելու պարզ մէթոտ մը փորձեցի: Ծանր ուսմբերուն գրեթէ զուգահեռական անկումը փափաքուած արդիւնքը արտադրեց: Մէթոտիս անմիջապէս հետեւեցան յարակից մարտկոցները, և քիչ ատենուան մէջ քանի մը հազար Ռուս և Աւստրիացի թաղեցինք լիճին ջուրերուն տակ»:

Իր հնարքներուն լիութեան մէջ ամէն խոչընդոտ կարծես կ'անհետէր: «Ալպեան լեռ պիտի չըլլայ», կ'ըսէր, և շինեց իր կատարեալ ճամբաները, աստիճանաւոր յարկերով մագլցելով անոր ամէնէն ցից գահաւանդներէն, մինչև որ Իտալիա Բարիզի առջև բացուեցաւ ինչպէս ո և է քաղաք Ֆրանսայի մէջ: Իր սուկրները գրաւ գրաւ իր գահուն համար և գործեց: Ըլլալիքը որոշելով, ըրաւ զայն կարողութեամբ և ձեռքով: Իր բոլոր զօրութիւնը դուրս թափեց: Վտանգի ենթարկեց ամէն ինչ, և ոչինչ խնայեց, ոչ ռազմամթերք, ոչ դրամ, ոչ զօրք, ոչ զօրավար, ոչ զինքը:

Կը սիրենք տեսնել որ ամէն ինչ իր պաշտօնը կատարէ ըստ իր տեսակին, ըլլայ ան կաթնտու կով մը կամ բոժոժաւոր օձ մը. և եթէ ցեղային պայքարները յարգարելու լաւագոյն եղանակը կոխը ըլլայ (ինչպէս մարդոց ստուար մեծամասնութիւնները կը թուին հաւանի), ստուգիւ Պոնաբարդ իրաւունք ունէր անթերի կատարելու զայն: «Պատերազմի մեծ սկզբունքը», կ'ըսէր, «ա'յն է որ բանակը միշտ պէտք է պատրաստ ըլլայ, գիշեր ու ցորեկ, և ամէն ժամ, ընկու ամէն ընդդիմութիւն զոր կարող է ընել»: Չէր տնտեսեր բնաւ իր ռազմամթերքը, այլ թշնամի դիրքի մը վրայ կ'անձրեւէր երկաթի տեղատարափ մը, — ռումբ, դնտակ, գունդ, — փճացնելու համար ամէն պաշտպանութիւն: Դիմադրութեան ո և է կէտի վրայ, կը կեդրոնացնէր գումարտակ գումարտակի վրայ գերակշիւ թիւերով, մինչև որ անոր գոյութիւնը աւուրէր սրբուէր: Եէնայի ճակատամարտէն երկու օր առաջ, Լօպէնշթայնի մէջ ձիաւոր սրսորդ գունդի մը կ'ըսէր. «Տղա՛քս, պէտք չէ վախնաք մահէն, երբ զինուորները մահուան խիզախն, զայն ևս կը մղեն թշնամիին շարքերուն մէջ»:

Յարձակումի տաք միջոցին ինք իրեն ալ չէր խնայեր
այլ ևւս : Իր հնարաւորութեան վերջին ծայրին կ'երթար :
Յայտնի է թէ Իտալիոյ մէջ ըրաւ ինչ որ կրնար, և
ամէն ինչ որ կրցաւ : Քանիցս մազապուր ազատեցաւ
փճացումէ, և իր անձն ալ գրեթէ պիտի կորսուէր :
Արքայայի ճահիճին մէջ սուղուեցաւ : Աւստրիացիք իր
և իր զօրքերուն միջեւ էին, խառնուրդին մէջ, և յու-
սահատական ճիգերով դուրս բերուեցաւ : Լճնաթոյի և
ուրիշ վայրերու մէջ գերի բռնուելու կէտին հասած էր :
Վաթսուն ճակատամարտ կուուեցաւ : Երբէք բաւական
չսեպեց : Մէն մի յաղթութիւն նոր զրահ մըն էր : «Իշ-
խանութիւնս պիտի իյնայ, եթէ նոր շահատակութիւն-
ներով վեր չբռնեմ զայն : Գրաւումը ըրաւ զիս ինչ
որ եմ, և գրաւումը պէտք է ամուր բռնէ զիս» : Ամէն
խելացի մարդու պէս կը զգար թէ պահպանութեան հա-
մար նոյնքան կեանք պէտք է որքան ստեղծումի հա-
մար : Միշտ վտանգի մէջ ենք, ձախողանքի մէջ, ճիշդ
կործանումին ծայրը, և հնարքով ու քաջութեամբ
միայն կարելի է ազատուիլ :

Այս կորովը կը պահուէր և կը ջրդեղուէր ամէնէն
պաղօրին խոհեմութեամբ և ճշգրտպահութեամբ : Շանթ
մը յարձակումի պահուն, անխոցելի կը գտնուէր իր
խրամատներուն մէջ : Իր յարձակումը անգամ քա-
ջութեան ներշնչումը չէր, այլ հաշիւի արդիւնքը : Ամն-
նայաւ պաշտպանութեան իր զազափարը կը կայանար
միշտ յարձակող կողմը ըլլալուն մէջ : «Փառասիրու-
թիւնս», կ'ըսէ, «մեծ էր, այլ պաղ բնութեամբ» : Լաս
Գաղասի հետ իր խօսակցութիւններէն մէկուն մէջ զի-
տել տուաւ. «Գալով բարոյական քաջութեան, ևս բա-
րերախտարար վիճակեցայ առաւօտեան ժամը երկուքի
տեսակին, ըսել կ'ուզեմ անպատրաստ քաջութեան, ա՛յն

որ անհրաժեշտ է անակնկալ առիթի մը պահուն, և որ, ի հեճուկս ամէնէն անսպասելի դէպքերուն, դատողութեան և որոշումի լիուլի ազատութիւն կը թողու»։ և չվարանեցաւ յայտարարելու որ ինքը վերին աստիճանով օժտուած էր «սառուօտեան ժամը երկուքի այս քաջութեամբ, և թէ այս մասին իրեն հաւասար եղողները թիւով չատ քիչ են»։

Ամէն ինչ կախում ունէր իր խորհուրդներուն ճշդութենէն, և աստղերը իր թուադիտութենէն աւելի ճշդապահ չէին։ Իր անձնական ուշադրութիւնը կ'իջնէր ամենափոքր մանրամասնութեանց։ «Մօնթէպէլլոյի մէջ, Գէլլէրմանի հրամայեցի որ յարձակում գործէ ութը հարիւր ձիաւորով, և ասով անիկա իրարմէ անջատեց վեց հազար Մաճառ նոնաձիգները Աւստրիական հեծելազօրքին աչքին առջեւ։ Այդ հեծելազօրքը կէս մղոն բացն էր և կէս ժամուան կը կարօտէր կռիւի դաշտը հասնելու համար, և միշտ դիտած եմ որ մէկ ժամու այս քառորդներն են որ կը վճռեն ճակատամարտներու քախտը»։ «Ճակատամարտի սկսելէ առաջ Պոնաբարդմիտքէն չէր անցըներ յաջողութեան պարագային ինչ ընելիքին վրայ, բայց խիստ շատ կը մտածէր՝ ձախողանքի պարագային ընելիքին վրայ»։ Միեւնոյն խոհեմութիւնը և ողջմտութիւնը կը դրոշմեն բոլոր իր վարմունքը։ Կ'արժէ յիշատակել իր քարտուղարին Թիւլլը-ռիի մէջ ուղղած հրահանգները։ «Գիշերանց կարելի եղածին չափ քիչ անգամ մտի՛ր սեննակս։ Զիս մի արթնցներ երբ բարի լուր մը ունիս հաղորդելիք, այդ մասին աճապարելու պէտք չկայ։ Բայց երբ գէշ լուր բերես, վայրկենաբար արթնցո՛ւր զիս, որովհետեւ ա՛յն միջոցին պէտք չէ վայրկեան մը իսկ կորանցնել»։ Միեւնոյն տեսակէն կամշոտ, արտաուոյ անտեսագիտութեամբ

մըն էր որ թելազրուեցաւ զործել, Իտալիոյ մէջ զօրա-
 վար եղած ատեն, իր բեռներով թղթակցութեան նկատ-
 մամբ: Հրամայեց Պուռիէնի երեք շարաթ առանց բա-
 նալու պահել ըտոր նամակները, ու յետոյ գոնունակու-
 թեամբ դիտեց որ թղթակցութեան սրբան կարեւոր
 մասը արդէն իսկ ըստ ինքեան կարգադրուած է, անոր
 պատասխանելու պէտք չէ մնացած. զործ տեսնելու իր
 եղանակը ահագին էր, և կ'ընդլայնէ մարդուն ծանօթ
 կարողութիւնները: Շատ գործող թագաւորներ եղած
 են Ողիտեսէն սկսեալ մինչև Օսանժի Ուիլերմը, բայց
 ո՛չ մին կատարած է այս մարդուն զործերուն մէկ
 տասներորդը:

A 13890

Բնութեան այս ձիրքերուն վրայ նարդլէոն աւել-
 ցուց աննշան և խոնարհ բախտի մը ծնած ըլլալու ա-
 ռաւելութիւնը: Իր յեանագոյն օրերուն տկարութիւնը
 ունեցաւ իր թագերուն վրայ նոր յաւելումներ բաղձա-
 լու, և ազնուականութեան տիպառներու համար յա-
 տուկ նշաններ կը հաստատէ. բայց կը ճանչնար իր խըս-
 տամբեր դաստիարակութեան հանդէպ իր պարտքը, և
 չէր ծածկեր իր արհամարհանքը ի ծնէ թագաւորներուն
 համար և «ժառանգական էչեր»ուն համար, ինչպէս կոչ-
 տարար կ'անուանէր Պուռպոնները: Կ'ըսէր թէ «իրենց
 տարագրութեան մէջ բան մը չեն սորված և բան մը
 չեն մոռցած»: Պոնաբարդ անցաւ զինուորական ծառա-
 յութեան ըտոր աստիճաններէն, բայց կայսր ըլլալէ ա-
 ռաջ քաղաքացի ալ էր, և այսպէս քաղաքացիութեան
 տանող բանալին ալ ունի: Իր դիտողութիւնները և
 կարծիքները կը գտնեն միջին դասակարգը շափելու կը-
 շիւքն ու ճշդութիւնը: Իրեն հետ գործ ունեցողները
 տեսան որ կարելի չէ ազդել անոր վրայ, այլ կրնան
 գրել անոր վրայ սովորական մարդու մը պէս: Ասիկա

կ'երեւի Ս. Հեղինէ իր թելադրած Յիշատակներուն բուրբ մասերուն մէջ: Երբ կասրուհիին, իր տունին, իր պալատներուն ծախքերը մեծաքանակ պարտքեր դիզեցին, Նարոյէոն ինք անձամբ քննեց առնելիքւորներուն հաշուեցուցակը, վերադիրներ և սխալներ տեսաւ, և պահանջներէն ստուար դումարներ վար իջաւ:

Իր մեծ զէնքը, այսինքն իր վարած միլիոնաւոր մարդիկը կը պարտի զինքը զրահապատող ներկայացուցչական, տիպար նկարագրին: Ան կը շահագրգռէ մեզ իբր թէ ներկայացուցիչն է Ֆրանսայի և Եւրոպայի, և գոյութիւն ունի իբրև հրամատար և թաղաւոր, որքան առնն որ յեղափոխութիւնը կամ գործաւոր դասակարգին շահը գործարան մը կամ առաջնորդ մը գտնէին անոր մէջ: Ընկերային շահերու մէջ, ճանչցաւ աշխատութեան իմաստն ու արժէքը, և բնականաբար այդ կողմը նետուեցաւ: Կը սիրեմ Ս. Հեղինէի մէջ իր կենսադիրներէն մէկուն կողմէ յիշատակուած մէկ դէպքը: «Տիկին Պէլքըմպի հետ ժուռ գալու միջոցին, քանի մը ծառաներ, ծանր անտուկներ բերելով, կ'անցնէին ճամբուն վրայ անոնց մօտէն, և Տիկին Պէլքըմպ քիչ մը բարկացոտ շեշտով հրամայեց որ սպասեն, կենան: Նարոյէոն միջամտեց, բսելով, «Բեռը յարգեցէ՛ք, Տիկին»: Կայտրութեան միջոցին ուշադրութիւն հրաւիրեց մայրաքաղաքին շուկաներուն բարոքման և գեղեցկացման վրայ: «Շուկան», կ'ըսէր, «հասարակ ժողովուրդին խուլուն է»: Իրմէ վերապրող զլխաւոր գործերն են իր չքեղ ճամբաները: Զօրքերը լեցուց իր ոգիով, և տեսակ մը ազատութիւն և բնկերակցութիւն աճեցաւ իրեն և անոնց միջև, ինչ որ իր արքունիքին ձեւակերպութիւնները բնաւ չթողարեցին սպաններուն և իրեն միջև: Անոնք իր աչքին տակ կը կատարէին ինչ որ ուրիշներ

չէին կրնար ընել: Իր զօրքերուն հանդէպ իր յարարե-
րութեան լուսազօյն յիշատակարանը ա՛յն օրակար-
գըն է զոր անոնց ուղղեց Աւստէրլիցի ճակատամարտին
առաւօտը, որուն մէջ Նաբոլէոն կը խոստանայ զօրքե-
րուն թէ իր անձը պիտի զգուշացնէ կրակին սահմանէն:
Այս յայտարարութիւնը, որ ճակատամարտի մը նախօր-
եակին զօրավարներու և վեհապետներու կողմէ սովո-
րարար եղածին հակատեան է, ըստ բաւականին կը բա-
ցատրէ բանակին անձնութիւնը իրենց պետին
հանդէպ:

Բայց թէ և մասնակի պարտզաներու մէջ այս նոյ-
նութիւնը կայ Նաբոլէոնի և ժողովրդային զանգուածին
միջև, անոր իրական ուժը կը կայանայ այս վերջին-
ներուն համոզումին մէջ թէ ան իրենց ներկայացու-
ցիչն էր իր ոգիով ու ձգտումներով, ոչ միայն սիրային
դարպասներ ըրած ատեն, այլ հակակշիռ ալ ըրած ա-
տեն, և նոյն իսկ իր զօրահաւաքումներով զիրենք տա-
սանորդած ատեն: Գիտէր, Ֆրանսայի մէջ ո և է ժազօ-
պէնի մը շափ, թէ ի՛նչպէս պէտք է փիլիսոփայել ազա-
տութեան և հաւասարութեան վրայ. և երբ ակնարկու-
թիւն կ'ըլլար դարերու ա՛յն թանկագին արիւնին, որ
կը թափուէր Էնկիէնէի դուքսին սպանութեամբ, յայտա-
րարեց. «Իմ արիւնս ալ խողովակի ջուր չէ»: Ժողո-
վուրդը կը զգար թէ գահը այլ ևս տէր չունէր, և ժա-
ռանգականներու փոքրաթիւ դասակարգ մը չէր ծծեր
երկրին սնունդը, հայրենիքին զաւակներուն հետ ամէն
հաղորդակցութենէ զիրենք մեկուսացուցած, և ամուր
բռնելով երկար ատենէ ի վեր մոռցուած ընկերային վի-
ճակի մը գաղափարներն ու նախապաշարումները: Այդ
մղձաւանջին տեղ իրենցմէ մարդ մը կար թիւյլըռի մէջ,
իրենց յատուկ գաղափարներով և ծանօթութիւններով,

իրենց և իրենց զաւակներուն առջև ի հարկէ բանայով իշխանութեան և վստահութեան բոլոր պաշտօնները թմրած, անձնամոլ, և երիտասարդներուն հնարաւորութիւնները ու պատեհութիւնները յաւէտ նեղցնող քաղաքականութիւնը վերջ գտած էր, և ծաւալումի ու խնդրանքի օր մը եկած էր: Մարդուն բոլոր կարողութեանց և արտադրութիւններուն համար հրապարակ մը բացուած էր, շողշողուն մրցանակներ կը ճառագայէին երիտասարդութեան և տաղանդին աչքին: Հնօրեայ, շղթայակապ, աւատական Թրանսսան երիտասարդ Սփոյի կամ Նիւ-Եօրքի փոխուած էր, և նոր վեհապետին անմիջական խստութիւններուն ներքե խալթուողները ներեցին անոնց, իբրև հարկաւոր խստութիւնները ա՛յն գինուորական գրութեան՝ որ դուրս վտարած էր հարստահարիչը: Եւ նոյն իսկ երբ ժողովուրդին մեծամասնութիւնը սկըսած էր հարցնել ինք իրեն թէ արդեօք իրապէս բան մը շահած էր այս նոր սիրով ներքե մարդու և դրամի սպառիչ հաւաքումներովը, — երկրին ամբողջ տաղանդը, մէն մի շարքի մէջ և մէն մի երդիքի տակ իր կողմը կը բռնէր և կը պաշտպանէր զայն իբրև իր բնական տէրը: 1814ին երբ խորհուրդ արուեցաւ իրեն յոյսը բարձր դասակարգերուն վրայ դնել, Նարոյէան իր շտրջը գտնուողներուն ըսաւ. «Պարտունէ՛ր, իմ գտնուած վիճակիս մէջ, իմ միակ ազնուականութիւնս արուարձաններու խուժանն է»:

Նարոյէան միշտ գտաւ այս բնական ակնկալութիւնը: Իր դիրքին հարկը կը պահանջէր ասպնջականել ամէն տեսակ տաղանդ, և զանոնք իրենց յարմարագոյն վայրերուն մէջ զետեղել, և իր այս զգացումը զուգընթաց եղաւ իր քաղաքականութեան: Իւրաքանչիւր բարձրագոյն անձի պէս, անտարակոյս կարօտ մը կը զգար մար-

դոց ու համարգներու և բաղձանք մը՝ իր կարողութիւնը
ուրիշ տէրերու հետ շփելու, և խելագարներու ու
ինկարկուռներու յատուկ անհամբերութիւն մը: Իտալիոյ
մէջ մարդ կը փնտռէր և մէկը չէր գտներ: «Աստուած
իմ», կ'ըսէր, «մարդիկ ո՛րքան հազուագիւտ են, տասնը
ութը միլիոն մարդ կայ Իտալիոյ մէջ, և դժուարաւ ել-
կու հոգի գտայ. — Տանտօլօ և Մէլցի» : Վերջին տարինե-
րուն, լայնագոյն փորձառութեամբ, մարդկութեան
հանդէպ իր յարգանքը չածեցաւ: Դառնութեան վայր-
կեանի մը մէջ ըսաւ իր ամենահին բարեկամներէն մէ-
կուն. «Մարդիկ արժանի են իրենց ինձի ներշնչած ար-
համարձանքին: Բաւական է որ քիչ մը ոսկի երիզ գնեմ
առաքինի հանրապետականներուս վերարկուին վրայ, և
անա անմիջապէս իմ վախաբաժիս պէս կ'ըլլան անոնք» :
Թեթեւաբարոյ մարդոց հասցէին այս գայրոյթը սակայն
անուղղակի գովեստ մըն էր. յարգանք մըն էր այն
կարող մարդոց հասցէին, որոնք իր ակնածութեան ա-
ռարկոյ էին ո՛չ միայն երբ զանոնք բարեկամ և գոր-
ծակից կը գտնէր, այլ նաև երբ անոնք իր կամքին կը
դիմադրէին : Չէր կրնար իր արքունիքին խեղկատակ-
ներուն հետ շփոթել Ֆօքսն ու Բիթը, Դառնօն,
Լաֆայէթն ու Պէռնատօթը, և իրեն հետ ու իրեն հա-
մար աշխարհակալող մեծ զօրապետներուն հանդէպ իր
սովորական ետասիրութեան թելադրած վրդովումին հա-
կառակ, լիաշուրթն երախտագիտութիւն կը յայտնէր
Լանի, Տիւռօքի, Քլէպէրի, Տէսէքսի, Մասէնայի, Միւ-
ռայի, Նէյի և Օժոնյի: Եթէ ինքզինքը անոնց բաղրօնը
կը զգար և անոնց բախտին հիմնարկուն, ինչպէս երբ
կ'ըսէր. «Զօրավարներս ես տիղմէն չինեցի», չէր կրնար
իր գոհունակութիւնը ծածկել անոնցմէ ընդունելով իր
ձեռնարկին մեծութեան համաչափ օժանդակութիւն մը

և նեցուկ մը: Ռուսական արշաւանքին ստոնն, Մարէշալ Նէյի արիութենէն և հնարամտութենէն ա՛յնքան ազդու-ւեցաւ որ ըսաւ. «Երկու հարիւր միլիոն ունիմ անտուկ-նեքուս մէջ, և պիտի ուղէի ամենքն ալ վրայ տալ Նէյի համար»: Իր Մարէշալներէն մէկ քանիին վրայ իր զծած պատկերները ողջամիտ են, և թէև անոնք չեն գոհա-ցներ ֆրանսացի սպաներու անկուշտ անապարծութիւնը, անտարակոյս իսկապէս ճիշդ են: Եւ արդարև անոր կա-ռավարութեան տակ կը փնտռուէր ու կը յառաջացուէր ամեն տեսակ արժանիք: «Կը ճանչնամ», կ'ըսէր, «իմ զօրավարներէս իւրաքանչիւրին խորութիւնը և տարու-զութիւնը»: Բնական կարողութիւնը վստահարար յա-ընդունելութիւն կը գտնէր իր արքունիքին մէջ: Իր ժամանակին մէջ, տասնը եօթը հոգի պարզ զինուորու-թենէ բարձրացան թագաւորի, մարէշալի, գուքսի, կամ զօրավարի աստիճանին, և իր Պատուոյ Լէզլոնի խա-չերը արուեցան անձնական արժանիքի, և ոչ ընտանե-կան կապերու: «Երբ զինուորները մկրտուին ճակատա-մարտի մը կրակին մէջ, ամէնքն ալ մէկ աստիճան ու-նին իմ աչքիս»:

Երբ բնական թագաւոր մը տիազոսաւոր թագաւոր կը դառնայ, իւրաքանչիւր ոք կ'ախորժի և կը գոհա-նայ: Յեղափոխութիւնը վարժեցուց Ս. Անթուան ար-ուարձանին հուժկու բնակիչները և բանակին ձիաւոր ազաքը և վառօդի սիրահարները՝ Նարոզլոնը նկատել իրրև միս իրենց միսէն և իրրև իրենց շարքերուն արա-րածը. բայց մեծ տաղանդի մը յաջողութեան մէջ բան մը կայ որ տիեզերական համակրութիւն կը պարտաւո-րէ: Որովհետև բոլոր բանաւոր մարդիկ շահ ունին որ խելքը յազթանակ տանի բթամտութեան և զեղծումի ոգիին վրայ, և իրրև մտաւոր էակ կը զգանք օգին

մաքրուիլը ելեքարական ցնցումով, երբ նխաթական ոյժը կը զգեանուի մտաւորական կորովէն: Տեղական և պատահական կողմնակցութիւններէ չվրդովուելուն պէս՝ մարդ կը զգայ թէ նարողէոն իրեն համար կը կուտի. անոնք պարկեշտ յազթութիւններ են. այդ հզօր շոգեշարժ մեքենան մեր գործը կը կատարէ: Ինչ որ կոչում կ'ընէ երեւակայութեան, մարդկային ընդունակութեան սովորական սահմանները վերացնելով, զարմանալի կերպով կը սրտասպնդէ և կ'ազատագրէ մեզ: Այս կարող գլուխը, դարձնելով ու տրամադրելով տիրաբար կառախումբերով գործեր, և ողբերկով այնքան խուռնամբօս գործիչներ, այն աչքը որ ևւրոպայի մէկ ծայրէն միւսը կը դիտէր, այն երազամիտ հնարողութիւնը, այն անսպասելի ազդիւրը, — ինչ դէպքեր, ինչ վիպային պատկերներ, ինչ տարօրինակ կացութիւններ — Այլահանները լրտեսած ատեն, իրիկնամուտի մը Սիկիլիան ծովուն մէջ, իր բանակը շարելու տունն ճակատամարտի համար, Բուրգերուն աչքին տակ, և իր զօրքերուն ըսելով. «Այս բուրգերուն զագաթէն քառասուն զարեր ձեզի կը նային», Կարմիր ծովուն մէկ հունէն անցած ատեն, Սուէզի պարանոցին մէջ սուզուած ատեն: Պրտզոմայիսի ծովափունքին վրայ հսկայ ծրագիրներ կը գզրդէին զինքը: «Եթէ Ակրա իյնար, աշխարհի կերպարանքը փոխած պիտի ըլլայի»: Իր բանակը Աւստէրլիցի ճակատամարտի զիչերը, որ տարեդարձն էր իր իրր Կայսր գահակալութեան, ներկայացուց իրեն կոխւիւն մէջ գրուուած քառասուն դրօշներու փունջ մը: Թերեւս քիչ մը տղայական է այն հաճոյքը զոր ունեցաւ այս հակապատկերները ցուցադրել տալով արեւուն դէմ, ինչպէս երբ հաճոյք զգաց թագաւորները սպասնելով իր նախասննակներուն մէջ, Թիւսիթ, Բարիզ և Էրֆուրթ:

Մարդոց ընդհանուր ապիկարութեան, շուարանքին և թուլամտրթութեան մէջ չենք կրնար ըստ բաւականին հիանալ այս հզօր և պատրաստ գործիչին վրայ, որ ներկայացուած պատեհութիւնը մօրութէն կը բռնէր, և ցոյց կուտար մեզի թէ ստօրին աստիճաններու մէջ բոլոր մարդոց ունեցած առաքինութիւններուն պարզ ոյժը ինչն՛ր կրնայ կատարել, այսինքն՝ ճշդապահութիւնը, անձնական ուշադրութիւնը, սրտատութիւնը, լման մարդ ըլլալը: «Աւստրիացիք, կըրտէր, ժամանակին արժէքը չեն գիտեր»: Հարկ է յիշատակել զինքը, իր նախնական տարիներուն մէջ, իրրեւ տիպօր մը խոհեմութեան: Իր կարողութիւնը չի կայանար անխորհուրդ կամ յախուռն ոյժի մը մէջ, ո և է մարգարէական խանդավառութեան կամ համոզումի եզական կարողութեան մէջ, այլ իւրաքանչիւր պատահականութեան առթիւ իր ողջմատութեան կիրարկումին մէջ, փոխանակ կանոններով ու սովորութիւններով ժամանակ անցընելու: Իր սովրեցուցած դասը ա՛յն է զոր կորովը միշտ կը սովրեցնէ, — թէ միշտ անոր համար տեղ կայ: Վախկոտ տարակոյսներու սրժան մեծ կոյտի մը պատասխան չէ այդ մարդուն կեանքը: Երբ կ'երեւնար, զինուորական մարդոց հաւատքը ա՛յն կ'ըլլար որ նոր բան մը պիտի չըլլայ պատերազմին մէջ. ինչպէս այսօր մարդոց հաւատքը ա՛յն է թէ քաղաքականութեան, կամ եկեղեցիին, կամ դպրութեանց, կամ վաճառականութեան, կամ հողագործութեան, կամ մեր ընկերային ձեւերուն և սովորոյթներուն մէջ նոր բան չի կարենար ձեռնարկուիլ և այս կերպով ալ, բոլոր ժամանակներուն մէջ ընկերութեան հաւատքը թէ աշխարհը մաշած է: Բայց Պոնաբարդ ընկերութենէն աւելի լաւ գիտէր, և, ասկից դատ, գիտէր թէ աւելի լաւը

գիտէր : Կը խորհիմ որ բոլոր մարդիկ իրենց բրածէն աւելի լաւը գիտեն . թէ մեր ա՛յնքան թեթեւօրէն դո՛ւ ված հաստատութիւնները քակել վարժեցնող սայլակներ և խաղալիկներ են . բայց իրենց նախազգացումներուն չեն համարձակիր վստահանալ : Պոնաբարդ վստահացաւ իր սեփական հասկացողութեան , և ոսպի չափ կարեւորութիւն չտուաւ միւսներուն հասկացողութեան : Աշխարհը իր նորութիւններուն հետ վարուեցաւ ինչպէս կը վարուի ամէնուն նորութիւններուն հետ , — անվերջ առարկութիւններ ըրաւ , բոլոր արգելքները կուտակեց . բայց ան մտար զարկաւ անոնց առարկութիւններուն : «Երկրի մը հրամատարին պաշտօնին մէջ մեծ դժուարութիւն առաջ բերող բանը ա՛յնքան մարդիկ ու կենդանիներ կերակրելու հարկն է : Եթէ զիջանի պատուիրակներու կողմէ առաջնորդուիլ , երբեք պիտի չչարժի , և իր բոլոր արշաւանքները պիտի վրիպին :» Իր ողջմտութեան մէկ օրինակն է ձմեռը Ալպեաններէն անցքին պահուն ըսածը , ինչ որ բոլոր զբողները , իրարու հաւել , իրրու անգործագրելի նկարագրած էին . «Ձմեռը», կ'ըսէ Նաբոլէոն , «բոլորովին անպատաս եղանակը չէ բարձրաբերձ լեռներու անցքին համար : Այն միջոցին ձիւնը հաստատուն կ'ըլլայ , օդը կանոնաւոր , և ձիւնակոյտերէն վախճալու տեղ չի մնար , ինչ որ միակ և իրական երկիւղալի վտանգն է Ալպեաններուն մէջ : Այդ բարձր լեռներուն վրայ յաճախ դեկտեմբերին շատ գեղեցիկ օդեր կ'ընէ , չոր ցուրտ մը , օդին մէջ վերջին ծայր հանդարտութեամբ» : Կարգացէ՛ք նաև ճակատամարտները շահեցնող կերպերուն վրայ իր հաշուետուութիւնը : «Բոլոր ճակատամարտներուն մէջ , կը պատահի վայրկեան մը՝ երբ ամէնէն քաջ զինուորները , ամենամեծ ճիգերը ընելէ վերջ , փախչելու հակամէտ կը

զգան զիրենք : Այդ սարսափը առաջ կուգայ իրենց իսկ քաջութեան պակասէն , և թեթեւ պատեհութիւն մը , պատրուակ մը միայն կը բաւէ վստահութիւնը վերաբարձարձելու համար անոնց մէջ : Արուեստը այդ պատեհութեան ծնունդ տայն է , և պատրուակը հնարելն է : Արգօլայի մէջ ճակատամարտը շահեցայ քսանըֆինդ ձիաւորով : Յոգնութեան այդ վայրկեանը առիթ բռնեցի , ամէն մէկուն փող մը տուի և օրը շահեցայ այս տի մը մարդոցմով : Կը տեսնէք որ երկու բանակները երկու մարմիններ են որոնք կը հանդիպին իրարու և կ'աշխատին զիրար վախցնել . անուսարսափի վայրկեան մը կը պատահի , և ահա այդ վայրկեանը պէտք է նպաստաւոր դարձնել : Երբ մէկը շատ մը կը սխալներու մէջ ներկայ եղած է , կ'որոշէ այդ բոպէն առանց դժուարութեան . գումար մը ընելու շափ դիւրին է :»

ԺԹ . զարու այս պատգամաւորը իր ձիրքերուն վրայ կ'աւելցնէր ընդհանուր նիւթերու վրայ խորհրդածութեան կարողութիւն մը : Հաճոյք կըզգար արշաւելով գործնական , գրական և վերացական խնդիրներու խորը : Իր կարծիքը միշտ ինքնազրոյմ է և նպատակին շեշտող : Եղիպտոս ուղեւորութեան ատեն կը սիրէր ճաշէն վերջ որոշել երեք չորս հոգի որ բան մը պաշտպանեն , և այնքան մարդ ալ ընդդիմախօսեն : Նիւթը կուտար , և վիճարանութիւնները կը դառնային կրօնական խնդիրներու , կառավարութեան տարրեր տեսակներու , և պատերազմի արուեստին վրայ : Սր մը հարցոյց թէ մոլորակները անբնա՞կ են արդեօք : Ուրիշ օր մը թէ ի՞նչ էր աշխարհի տարիքը : Յետոյ անոնյ առաջադրեց նկատի առնել երկրագունտին կամ ջուրէն կամ կրակէն կործանուելու հաւանականութիւնը . ուրիշ անգամ

մը, նախազգացումներուն ճշմարիտ կամ խարէական ըլլալը, և երազներու մեկնութիւնը: Կրօնքի վրայ խօսիլը շատ կը սիրէր: 1806ին Մօնրէյիէի եպիսկոպոս Ֆուռնիէի հետ աստուածաբանական նիւթերու վրայ կը խօսակցէր: Երկու կէտի վրայ չէին կրնար համաձայնիլ, այսինքն՝ դժոխքի և արտաքոյ եկեղեցւոյ փրկութեան վրայ: Կայսրը պատմեց յետոյ ժողէֆինին թէ դեի մը պէս փիճարանեցաւ այս երկու կէտերուն վրայ, բայց, եպիսկոպոսը անողոք մնաց: Իմաստասէրներուն շատ շուտով տեղի կուտար ամէն ինչ որ կրօնքին դէմ ապացուցուած էր իբրև մարդոց և ժամանակի դործբայց չէր ուզեր նիւթապաշտութեան խօսքը լսել: Գեղեցիկ գիշեր մը, Նաւակամուրջին վրայ, նիւթապաշտութեան բարբանջանքներու միջոցին, Պոնաբարդ աստղերը մատնացոյց ըլլաւ, և ըսաւ. «Կրնաք ուղածնուդ չափ խօսիլ, պարոններ, բայց ս'վ ըրաւ այս ամէնը»: Հաճոյք կը զգար գիտական մարդոց, մասնաւորապէս Մօնթի և Պէթօլի խօսակցութենէն, բայց զրազէտներէ չէր ակտրմեր. «Բառերու վաճառական են անոնք:» Կը սիրէր նաև բժշկութեան վրայ խօսիլ և իր ամէնէն աւելի յարգած բժշկներուն հետ, — Գոսվիզաո՝ Բարիզի մէջ և Անթօնօմարքի՝ Ս. Հեղինէի մէջ: «Հաւատա՛ ինձի», կ'ըսէր վերջինին, «լաւ կ'ընենք մէկ կողմ նետելով բոլոր այն գեղերը, կեանքը ա՛յնպիսի ամբողջ մ'է որուն մասին ոչ դուն և ոչ ես բան մը չենք գիտեր: Ինչո՞ւ խօչընդոտներ նետենք անոր պաշտպանութեան ճամբուն վրայ: Անոր սեփական միջոցները ձեր քիմիական աշխատանոցին բոլոր դործիքներէն աւելի վեր են: Գոսվիզաո միամտօրէն համամիտ էր ինձի թէ բոլոր ձեր աղտեղի խառնուրդները ոչինչի օգտակար են: Բժըշկութիւնը հաւաքածոյ մըն է անստոյգ պատուէրներու,

որոնց հետեւանքները, հաւաքաբար առնելով, մարդկութեան աւելի ազիտարեր են քան օգտակար։ Օդ, Զուր և մաքրութիւն, գլխաւոր ապրանքներն են իմ դեղարանիս մէջ։»

Իր յիշատակները, զորս Ս. Հեղինէի մէջ թելադրեց Կոմս Մօնթօլօնի և զօրավար Կուռկոյի, մեծ արժէք ունին, բոլորովին վերցնելով անոնցմէ ամէն ինչ որ հետեւանքն է իր վերջին օրերուն պայծառատեսութեան յայտնի պակասին։ Ուժի և զիտակից գերակշռութեան բարեբոյս խառնուածքը ունի։ Կը հիանամ իր ճակատամարտներուն մասին իր պարզ, վճիտ պատմուածքին վրայ. Կեսարի շափ բարի, Մարէշալ Ուրբմարի և իր միւս հակառակորդներուն վրայ իր բարեմոյն և բաւ բաւականին յարգալից պատմութիւնը. և իբր գրագէտ իր զանազան նիւթերուն հանդէպ իր բաւարարութիւնը հիացում կը պատճառեն ինծի։ Ամէնէն հաճելի մասը Եգիպտոսի արչաւանքն է։

Մտածումի և իմաստութեան ժամեր ունէր։ Պարասոյ վայրկեաններուն, կամ բանակնտղին կամ պալատին մէջ, Նաբոլէօն իբր հանճարի մարդ մը կ'երեւի, վերացական խնդիրներու վրայ ուղղելով ճշմարտութեան համար բնածին ախորժակը, և բառերու զայրոյթը, զոր սովոր էր ցոյց տալ պատերազմի մէջ։ Կրնար ըմբոյշանել գիւտի մէն մի խաղ, վիպերգ մը, սրամիտ բառ մը, ինչպէս նաև ռազմական հնարք մը արչաւանքի պահուն։ Հաճոյք կը զգար հմայելով ժօզէֆինը և անոր պատուակալ աիկիները, կիսալոյս յարկարածինի մը մէջ, առասպելի մը սարսափներով որոնց ամէն յաւելում կուտային իր ձայնն ու թատերական կարողութիւնը։

Նաբոլէօնը կը կոչեմ արդի ընկերութեան միջին

դասակարգին գործիչը կամ փաստաբանը, — շուկաները, խանութները, հաշուենսեղանները, գործարանները, նաւերը լեցնող խուժանին, հարուստ ըլլալու ձգտող արդի աշխարհին : Հաստատափայ կանոնադրութեանց կործանարարը, վրդովիչն էր, ներքին բարեկարգիչը, ազատականը, արմատականը, միջոցներու հնարիչը, դուռներու և շուկաներու բացողը, մենավաճառի և զեղծումի հակառակորդը : Բնականարար, հարուստն ու ազնուականը չսիրեցին զինքը : Անգլիա, դրամագլուխի կեդրոնը, և Հոմ ու Աւստրիա, աւանդութեան և ծնընդարանութեան կեդրոնները, հակառակեցան իրեն : Բթամիա ու պահպանողական դասակարգերուն ահաբեկումը, Հոմէական փակարանին խօլամիա ձերերուն ու պառաւներուն սարսափը, որոնք իրենց յուսահատութեան մէջ ամէն առիթ ծառայեցուցին, և մինչև իսկ կրակի պէս կարմիր երկաթին ալ կ'ուզէին կառչիլ, — վիճակագիրներու ունայն փորձերը զայն զրօսցնելու և խարելու համար, զայն կաշառելու համար Աւստրիոյ կայսեր պակասամիտ փորձերը, և երիտասարդ, խանդալառ ու գործօն մարդոց բնազդումը, ամենուրեք, որ մասնացոյց ըրաւ զայն իբրև միջին դասակարգին հսկան, պայծառ և ափրական կ'ընեն իր պատմութիւնը : Իր բնորոշներուն ստուար զանգուածին առաքինութիւնները ունեցաւ, անոնց մելութիւններն ալ ունէր : Կը ցաւիմ որ փայլուն պատկերը իր հակակողմը ունի : Բայց ճակատագրական յատկութիւնն է այս՝ որուն կը հանդիպինք հարստութեան ետեւէն մեր վազքին մէջ, որ նենգամիտ է, և կը գնուի զգացումներու խորտակումով ու տկարութեամբ, և անխուսափելի է որ նոյն իրողութիւնը պիտի գտնէինք պատմութեանը մէջ այս ախոյսիանին, որ պարզապէս առաջադրեց իրեն համար

փայլուն ասպարէզ մը, առանց ունէ պայմանի կամ խղճահարութեան՝ միջոցներուն նկատմամբ:

Պոնաբարդ տարօրինակ կերպով զուրկ էր վեհօգի զգացումներէ: Աշխարհին ամէնէն մշակեալ դարուն և ժողովուրդին մէջ բարձրագիւր անհատը, — հասարակ ճշմարտութեան և պարկեշտութեան արժանիքը չունի: Անիրաւ է հանդէպ իր զօրավարներուն, ևսապաշտ և համադրաւիչ, ստորնարար կը գողնայ Քէլլէրմանէն և Պէննատօթէն անօնց մեծ գործողութիւններուն վարկը, կը դաւէ՝ անյոյս մնանկութեան մղելու իր հաւատարիմ ժիւնօն, Բարիդէն քիչ մը հեռի քշելու համար զայն, որովհետև անոր ձեւերուն ընտանութիւնը կը վեատէ իր գահուն Ղորստաց վեհութեան: Անսահման ստախօս մըն է: Պաշտօնաթերթը, իր Մօնիթրօնները, և բոլոր իր օրակարգի տետրակները առակներ են՝ ըսելու համար ինչ որ ինք կը փափաքէր որ հաւատացուէին, և աւելի գէշը, — իր վաղահաս ծերութեանը, իր մենաւոր կղզիին մէջ նստած, պաղարեամբ կը խեղաթիւրէ իրողութիւնները, և թուականները, ու նկարագիրները, և պատմութեան կուտայ թատերական փայլ մը: Բոլոր Ֆրանսացիներուն նման թատերական արդիւնքի ծայրայեղ սէր մը ունի: Վեհանձնութիւն բուրօղ ամէն գործ կը թունաւորուի այս հաշիւով: Իր աստղը, փառքի իր սէրը, հոգիի անմահութեան վրայ իր վարդապետութիւնը բոլորովին ֆրանսական են: «Պէտք էր որ շլացնէի և հիացնէի: Եթէ մամուլի ազատութիւն տայի, իշխանութիւնս պիտի չկրնար երեք օր տեսել»: Իր սիրական նշանաբանն է մեծ ազմուկ յարուցանել: «Մեծ համբաւը մեծ ազմուկ մըն է, ո՛րքան աւելի շինուի, ա՛յնքան հեռուն կը լսուի: Սրէնք, հաստատութիւններ, յիշատակարաններ, ազգեր, ամենքը կ'իյնան. բայց միտքը կը շարունակէ

և կ'արձագանգէ յետնագոյն դարերուն մէջ» : Անմահութեան իր վարդապետութիւնը պարզապէս համարու է : Ազգեցութեան մասին իր տեսութիւնը պատուարեր չէ : «Յրկու լծակ կայ մարդիկը շարժելու համար, — շահ և վախ : Աէրը նենգ հրապոյր մըն է, յոյս զի՛ր անոր վրայ : Բարեկամութիւնը անուն մըն է միայն : Ոչ զոք կը սիրեմ : Նոյն իսկ եղբայրներս չեմ սիրեր. թերեւ ժողէֆը, քիչ մը, ունակութեամբ, և որովհետեւ իմ երէցն է, և Տիւռօքն ալ կը սիրեմ. բայց ինչո՞ւ, որովհետեւ իր նկարագրին կը հաւնիմ, հաստատամիտ է և պինդ, և կը հաւատամ որ մարդուկը բնաւ արցունք մը թափած չէ աչքէն : Իմ մասիւ, շատ լաւ գիտեմ որ բնաւ ճշմարիտ բարեկամ չունիմ : Յորչափ շարունակեմ ըլլալ ինչ որ եմ, կրնամ ուղածիս շափ կարծեցեալ բարեկամներ ունենալ : Չգայնտութիւնը կիներուն ձրգեցէ՛ք. բայց այր մարդիկ պէտք է ամուր ըլլան սրբտով ու առաջադրութեամբ, ապա թէ ոչ՝ բնաւ խառնուելու չեն կառավարութեան և պատերազմի :» Արմատապէս անխիղճ էր : Պիտի գողնար, զրպարտէր, սպաննէր, խեղդէր և թունաւորէր, ինչպէս որ թիկազրէր իր շահը : Բնաւ վեհանձնութիւն չունէր, այլ լոկ գձուձ ատելութիւն. սերտօրէն անձնատէր էր, նենգաւոր էր, խաղի ատեն կը խարդախէր. զարմանալի շատախօս մըն էր և նամակները կը բանար, և հաճոյք կ'իմանար իր անպատիւ ոստիկանութենէն, և ուրախութեամբ ձեռքերը կը շփէր, երբ կտոր մը զազանի լուր աւնէր իրեն շուրջ գտնուող մարդոց և կիներուն նկատմամբ, պարծենալով թէ «ամէն բանի ծանօթ էր», և կը միջամտէր կիներու զգեստներուն ձեւին, և ծպտեալ կերպարանքով մտիկ կ'ընէր փողոցի հուրբաներուն և բարեմազութիւններուն : Իր ձեւերը կոշտ էին : Կիներուն

հետ ստորին ընտանութեամբ կը վարուէր: Սովորութիւն ունէր անոնց ականջներէն քաշելու, անոնց այտերը կամթելու, երբ զուարթ էր, և քաշելու մարդոց ականջներէն ու սիխերէն և իշու կատակներ ընելու անոնց հետ իր վերջին օրերուն: Ձի կարծուիր որ բանալիի ծակերէն մտիկ ըրած ըլլայ, — կամ գոնէ բոնուած չէ ասոր մէջ: Կարճ խօսքով, երբ թափանցէք խորը իշխանութեան և պերճանքին բոլոր շրջանակերուն, վերջապէս ձեր առջև պատուաւոր մարդ մը չէք գտներ, այլ խարհերայ մը և սրիկայ մը, և ան լիովին արժանի է տեսակ մը Գձուձ Արամազդ (Jupiter Scapin) մակդիրին:

Նկարագրելով երկու մասերը որոնց կը բաժնուի արդէ ընկերութիւնը, — Ժողովրդայինն ու Պանպանողականը, — ըսի թէ Պոնաբարդ կը ներկայացնէ Ժողովրդայինը, կամ զործի մարդոց խումբը՝ կայուն կամ պանպանողական խումբին դէմ: Այն պահուն զանց ըրի ըսել թէ ո՞րն է թուն նիւթական պատճառը սա՛ յայտարարութեան թէ այս երկու խումբերը կը տարբերին միայն իրրե երիտասարդ և ձեր: Ժողովրդայինը երիտասարդ պանպանողական մըն է, պանպանողականը՝ ձեր ժողովրդային մը: Ազնուականը հասուն ժողովրդայինն է, ցանկու գացած, — որովհետեւ երկու խումբերն ալ սեփականութեան գերագոյն արժէքին մէկ գետինին վրայ կը մնան, զոր մին կը ջանայ ստանալ, և միւսը պահել: Կրնայ ըստ իլ թէ Պոնաբարդ կը ներկայացնէ այս խումբին ամբողջ պատմութիւնը, անոր պատանեկութիւնը և չափահասութիւնը. այո՛, և քերթողական արդարութեամբ, անոր ճակատագիրը, իր իսկ ճակատագրին մէջ: Հակայնդափոխութիւնը, հակախումբը տակաւին կը սպասէ իր զործարանին, իր ներկայացու-

ցիլին, որ իրաւցնէ հանրական և ընդհանուր ձգտումներու սիրողը և մարդը ըլլայ:

Ամէնէն նպաստաւոր պայմաններու տակ, անգիտակից իմացականութեան կարողութիւններու փորձ մը եղաւ: Երբեք չէր եղած ա՛յնքան օժտեալ և ա՛յնքան զրահաւորուած վարիչ մը. ո՛չ մէկ վարիչ գտաւ ա՛յնքան օգնականներ և հետևորդներ: Եւ ի՞նչ եղաւ արդիւնքը այս ընդարձակ տաղանդին և կարողութեան, այս անհուն բանակներուն, այրեացաւեր քաղաքներուն, վատնուած գանձերուն, զոհուած միլիոնաւոր մարդոց, այս անբարոյացած Եւրոպային: Բոլորովին ապարդիւն: Ամէն ինչ անցաւ սահեցաւ իր հրեշտանիին ծուխին նման և ու է հետք չթողուց: Ֆրանսան ձգեց գտածէն աւելի փոքր, ազքատ, տկար, և ազատութեան համար ամբողջ մրցումը նոր ի նորոյ պիտի սկսէր: Փորձը, սկզբունքով, անձնասպանական եղաւ: Ֆրանսա ծառայեց իրեն կեանքով, և ոտքով, և հարստութեամբ, որչափ որ կրցաւ իր շահը նոյնացնել անոր հետ. բայց երբ մարդիկ տեսան որ յաղթութենէ վերջ նոր պատերազմ կ'ըլլար, բանակներու փճացումէ վերջ նոր զօրահաւաքում, և ա՛յնքան յուսահատաբար տաժանողները բնաւ չէին մօտենար վարձատրութեան, — չէին կրնար վայելել շահածնին, ոչ ալ հանգչիլ իրենց փափուկ անկողիններուն վրայ, ո՛չ փերեւերտել իրենց դղեակներուն մէջ, — դասալիք եղան իրմէ: Տեսան որ այս սուզիչ եսապաշտութիւնը մահաոխիթ էր բոլոր միւս մարդոց: Կը նմանէր թորփիլածուկին, որ յաջորդական հարուածներ կը տեղացնէ զինքը բռնողներուն վրայ, ձեռքին մկանունքը պրկսզ ցնցումներ արտադրելով, ա՛յնպէս որ մարդ չի կրնար մատները բանալ, և կենդանին նոր ու աւելի բուռն հարուածներ կը տեղայ, մինչեւ որ ան-

դամալուծէ և սպաննէ իր զոհը: Այսպէս, այս տարապայման եսապաշար նեղցաւ, աղքատացաւ, և իրեն ծառայողներուն կարողութիւնն ու գոյութիւնը կուտուաւ, և 1814ին Ֆրանսայի և Եւրոպայի տիեզերական ազադակը եղաւ «ա՛յ կը բաւէ ասիկա», «ա՛յ կը բաւէ Պոնաբարդը:»

Յանցանքը Պոնաբարդինը չէր: Իր ձեռքէն ի՛նչ որ կուգար ըրաւ, ապրելու և յաջողելու համար առանց բարոյական սկզբունքի: Իրերու բնութիւնն էր, մարդուն և աշխարհի յաւիտենական օրէնքը, որ դեգեւեց և կործանեց զինքը, և արդիւնքը միլիոնաւոր փորձերու մէջ նոյնը պիտի ըլլայ: Մէն մի փորձ, բազմութիւններու կամ անհասանելի վրայ, որ զգայական և ինքնասէր ձգտում ունի, պիտի վրիպի: Խաղաղասէրն Յուսիէ նոյնքան ապարդիւն պիտի ըլլայ որքան շնասուկար նարոյէոնը: Յորչափ մեր քաղաքակրթութիւնը իսկապէս սեփականութեան, խրամատներու, այլամերժութեան քաղաքակրթութիւնն է, յուսախարութիւններէ պիտի ծագրուի: Մեր հարստութիւնները հիւանդ պիտի ընեն մեզ, դառնութիւն պիտի ըլլայ մեր ծիծաղին մէջ. և մեր զինին պիտի այրէ մեր բերանը: Այն բարիքը միայն օգուտ կ'ընծայէ, զոր կրնանք հաշակել դուռներնիս բաց թողլով, և որ կը ծառայէ բոլոր մարդոց:





